

Պ. Հակոբյան

ԳՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԱՆՏԵՍՍԱՆ ՄԻ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ

Աբովյանի արխիվում մի նամակ կա՝ գրված 1835 թ. հունվարի 1-ին և ուղղված հաշատուր Լազարյանին, Նոր տարվա իր խորհրդածությունները հայտնելով հայ մեծահարուստին, Աբովյանն աշխատում է շահագրգռել նրան Նոր նվիրաբերումներ անելու հոգուտ հայ մանուկների կրթության, նամակն ունի նաև երկու սեագիր օրինակներ, երևում է, որ Աբովյանից շատ ժամանակ է խլել նրա շարադրելը։ Այս նախակը շատ վաղուց ծանոթ է բանասերներին, 'Իոկտոբր-պրոֆեսոր Ռ. Զարյանը դեռ 1948 թ. նրա մասին ընդարձակ գրել է իր «Նոր տվյալներ Աբովյանի կյանքից» աշխատության մեջ, նամակը տպագրված է նաև իս. Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության 10-րդ հատորում։ Նամակի տեքստը և ծանոթագրությունները տպագրության է պատրաստել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող Լ. Կարապետյանը։ Այդ մասին գրված է գրքի 4-րդ էջում և նախաբանում։

Պետական արխիվի աշխատակից Ա. Սարգսյանը մի երկու տարի առաջ լենինգրադի մարզի պետական պատմական արխիվում, № 510 ֆոնդի 15-րդ գործի մեջ, որ նրանից շատ տարիներ առաջ ուսումնասիրել են գրականագետ Մ. Արեշյանը, արվեստաբան Մ. Ղազարյանը, տողերիս գրողը, պատահելով Աբովյանի հիշյալ նամակի տարբերակին, առանց հանգամանալից ուսումնասիրելու այն, թե ինչ է ներկայացնում իրենից և աբովյանագիտական գրականության մեջ ինչ կա այդ նամակի մասին, առանց ստուգելու Աբովյանի արխիվը, որ երևանում է գտնվում, առանց նամակի երկու տարբերակներն ու սեագրություններն իրար հետ բաղդատելու հրապարակել է պետարխիվի «Ինֆորմացիոն բյուլետենում» (1961, №2), տասնյակ սխալներով, աղավաղումներով։ Ավելին. նա կշտամբանքի խոսքեր է ուղղում նաև գրականագետներին, որոնք, իր ասելով, «դեռևս շատ անելիքներ ունեն մեծ գրողի և հումանիստի նամակները, գրական ժառանգությունը ի մի հավաքելու», քանի որ «ներա միշտը գործեր անհայտ են մեղ»։ Ա. Սարգսյանը գրաբար չգիտե, չգիտե հրատարակության կանոնները, հարյուրից ավելի ուղղագրական ու կետադրական սխալներ, աղավաղումներ է թույլ տվել։ «Լուսեալ» պարզ բառը կարդում է «նա-սեսալ», «լանջարկեալը» — «շանդարկեալ», «հայեցեալը» — «հայցեալ», «ուր» — «ուր», «դարուցը» — «տարեաց», «խեուր» — «խառ», «բափեցէրը» — «բափեցէր», «կուստականը» — «կարոտական» (այն էլ ու-վ), «դանդաշեալը» — «դանդաշեալ», «իլծը» — «եւծ», չգիտե, որ գրաբարում եթե գրվում է է-ով (եթէ), թշվառը՝ ու-ով (թշուռ), միջակետ բառի սեռական հոլովը լինում է «միջակետի», դեմք բառի հոգնակի հայցականը կլինի «զղլմս», բառի բառի հոգնակի գործիականը կլինի ոչ թե «բարեւէլ» այլ «բարեւոս», դառնալ բայի եղակի երրորդ դեմքից հետո պետք է դնել կիսաձայն յ (դառնայ) և այլն, և այլն։ Ավելին. նամակի վերջին կցել է մի քառյակ, որը Աբովյանը բոլորովին այլ նպատակի համար է գրել և օգտագործել. նամակի վրա ստացողի (իս. Լազարյանի)

արած նշումները բաց է թողել, մի խոսքով անտեսել է գրական էթիկան և դասական գրողների երկերի հրատարակության հանրահայտ օրենքները, փաստեր, որոնց կողքով անկարելի էր անցնել: Երկար ժամանակ սպասում էինք, մտածելով թե խմբագրությունը կամ հեղինակը կբացատրեն, թե ինչու է այդպես ստացվել, սակայն անցան ամիսներ ու տարի և քար լուծվում տիրեց: Երեւելով շատ տգեղ էր, և Հայաստանի պետարխիվի «Բանբերի» 1963 թ. № 1-ում տպագրված «Ստեփանոս Նեոսիսյանի նամակները» հրապարակման մի ծանոթագրության մեջ պետարխիվի ղեկավարության ուշադրությունը հրավիրեցինք այդ իրողության վրա: «Բանբերի» խմբագրությունը փոխանակ ղրանից համապատասխան հետևություն անելու, վերջին՝ 1964 թ. № 3-ում նորից տեղ է հատկացրել նույն հեղինակին, որը առաջին հայտնագործողի դափնիները կորցնելու տագնապից անհանգստացած՝ ոչ միայն անիմաստ դատողություններով փորձում է արդարանալ, այլև եղած սխալների և աղավաղումների մեղքը բարդում է խմբագրության վրա: «Խմբագրության անբարեխիղճ աշխատակիցների պատճառով սխալներով է տպագրվել» — գրում է նա:

Այնուհետև՝ Աբովյանի իսկ ձեռքով գրված երևանյան տարբերակը հայտարարում է «աղավաղված», «սեպագրություն» նշելով «նախադասության շարունակությունը աղավաղված է երևանյան տարբերակում»: Հարց է առաջանում՝ ո՞ր լուրջ մարդը կարող է ոչ միայն գրել, այլև մտքով անցկացնել, թե Աբովյանի նման մի գրողը կարող էր իր սեփական ձեռագիրը՝ իր նամակը աղավաղել... Երևի 130 տարի հետո պետարխիվի գիտաշխատողին արդարանալու փաստեր տալու համար:

Վերջապես՝ այն հարցին, թե ինչու՞ աչքաթող են արվել լենինգրադի արխիվի նույն ֆոնդի նույն գործում եղած Աբովյանին վերաբերող մյուս գրությունները, Ա. Սարգսյանը շտապում է ծանուցել, որ ինքը տեղյակ է նրանց ևս, և նոր սխալներ է թույլ տալիս: Աբովյանի ձեռագիր են համարվում Քիշինևի կոնսիստորիայի գրագրի ձեռքով գրված թղթերը, պրոֆ. Կոստիուսի ռուսերեն նամակը դառնում է հայերեն և այլն: Զարմանում ես, որ Աբովյանի մի շարք անհայտ գործերի մասին իմացողը հանկարծ չի կարողանում նրա ձեռագիրը ուրիշներից տարբերել:

Զարմացնում է «Բանբերի» խմբագրության դիրքը: Ի՞նչ են մտածել, երբ խմբագրական այսպիսի ծանոթություն են գրել. «Խ. Աբովյանի նամակի լենինգրադյան տարբերակը լույս է տեսել «Խնֆորմացիոն բյուլետենում» 1961 թ. դեկտեմբերին, իսկ երևանյան տարբերակը 18 ամիս հետո, 1962 թվականին»: Նախ՝ խմբագրությունը բացահայտ անտեղյակություն է ցուցաբերել, երբ այդպես է գրել. քանի որ նամակի երևանյան տարբերակը, որ տեղավորված է Աբովյանի երկերի 10-րդ հատորում, լույս է տեսել 1961 թվականին: Բայց դա ոչինչ, այսպիսի սխալի համար կարելի է ներել խմբագրությանը: Իսկ միթե խմբագրության աշխատողները չգիտեն, որ տարին 12 ամիս ունի, այլ ոչ թե 18:

«Հայտնագործություններ» կատարելու բուռն ցանկությունը Ա. Սարգսյանին այնքան հեռու է տարել, որ նա կարծել է, թե նամակի երևանյան տարբերակի հրապարակողը տողերիս գրողն է և մի ծիծաղելի բանավեճ է սկսել... Դրա համար կարելի է ներել և կարեկցորեն ժպտալ: Դարձյալ անհասկանալի է մնում խմբագրության դիրքն այս հարցում: Փոխանակ լենինգրադի մարզի պետական պատմական արխիվից պահանջելու խնդրո առարկա նամակը ամ-

փոփոզ զործը և նրա շապկի հակառակ էջում փակցրած ուսումնասիրողների ցուցակով ճշտելու, թե երբ է Ա. Սարգսյանը ձեռքի տակ ունեցել հիշյալ գործը վերստին տպագրում է նամակի և՛ նրեանի, և՛ լենինգրադի տարբերակները, այն էլ նոր սխալներով: Մի՞թե շորս տարին բավական չէր, որ երկուեկես էջանոց մի ձեռագիր կարելի լիներ ճիշտ վերծանել:

Մի՞թե առանձին մասնագիտական պատրաստություն էր պահանջում հասկանալու համար, որ իս. Հաղարյանին ուղղված Աբովյանի նամակը գիտական շրջանառության մեջ բերելու պատիվը ուսականում է պրոֆ. Ռ. Զարյանին, իսկ ինչ վերաբերում է պետարխիվի ավագ գիտաշխատող Ա. Սարգսյանին, ապա նա սոսկ նամակի լենինգրադյան տարբերակի աղավաղված ձևով հրատարակողն է: Ի դեպ նա մենակ չի եղել. նրա ընկերն է եղել այդ գործում (ինչպես հուշում են լենինգրադյան մարզի պետարխիվի և Հայաստանի արխիվային վարչության բյուլետենի խմբագրության նյութերը) դարձյալ ավագ գիտաշխատող ոմն Ս. Ալեքսանյան, որը հայտնի առակի հերոսի նման հետո լքել է ընկերոջը և թողել, որ ողջ տհաճությունները բաժին մնան Ա. Սարգսյանին: «Բանբերի» խմբագրությունը քաջություն պետք է ունենար այս մասին պատշաճ ծանոթություն տալու և ո՛չ թե տարին ձգեր մինչև տասնութ ամիս, մի բան, որ անհնար և ծիծաղելի է: